

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գ. Մեծամորի համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր 3.3-1) թափուր պաշտոն զբաղեցնելու համար

14.01.2020թվական

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ

Հայտատու՝ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարան «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

1. ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-1):

2-րդ կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով իրականացնում է շենք շինությունների գույքահարկի գանձման, ավտոմեքենաների գույքահարկի գանձման աշխատանքները և միևնույն ժամանակ կատարում բոլոր անդորրագրերի մուտքագրում: Իրականացնում և վերահսկում է համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները: Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կատարում է համակարգչային ծրագրերի փաստաթղթաշրջանառության հետ կապված աշխատանքները:

Իրականացնում է իր պաշտոնի ա նձնագրով սահմանված այլ գործառույթներ:

-Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է միջնակարգ կրթություն:

-Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Գույքահարկի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքները, Աշխատակազմի կանոնադրությունը և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2020 թվականի փետրվարի 18 -ին ժամը 12.00-ին Մեծամորի համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթեր.

- Դիմում՝ մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս /

- Տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյուններից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պաճենները բնօրինակների հետ միասին:

- Հայտարարություն այն մասին , որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 15 -ի N 98-Ա որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

- Արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեններ:

. Մեկ լուսանկար 3x4 չափի

- Անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություն ստանալու , ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարան Մ.Սարյան N 1/1 վարչական շենք հեռ. 093-19-61-91 և ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄ ների հարցերով վարչություն, / հասցեն՝ ք. Արմավիր Աբովյան 71, հեռախոսներ (0237)2-07-70, (0237)2-76-49: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ 9⁰⁰- ից մինչև 18⁰⁰-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2020թվականի փետրվարի 3-ը ժամը 18-00-ն: